ԱՐՄԱՆ ՎԵՐՄԻՇՅԱՆ
ARMAN VERMISHYAN

ՀՈԳՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆ՝ ԸՍՏ ԴԱՍԱԿԱՆ ԶՐԱԴԱՇՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎԵՍՏԱՅԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ

Դասական զրադաշտականության մեջ վախճանից հետո հոգու դատավճռի վերաբերյալ գոյություն ունեցող հավատալիքները «մահվան առասպելի» անբաժանելի մաս են կազմել: Հուղարկավորության ընթացքում կատարվող ծեսերը և մահից հետո հոգու վերաբերյալ զրադաշտականների պատկերացումներն ամփոփվել են կրոնահավատալիքային համակարգի և առասպելական մտածողության այն ձևաչափում, որտեղ տիրապետող են ոչ թե միտքն ու բանականությունը, այլ հավատալիքներն ու առասպելական մտածողությունը:

Վստահորեն կարելի է արձանագրել, որ տարբեր կրոններում առկա էխատոլոգիական[1] պատկերացումները համակողմանիորեն ուսումնասիրելու համար հարկավոր է նաև ճանաչել զգայական աշխարհի նրբությունները: Այդ մասին է հավաստում նաև XX դարի կրոնի մեծանուն պատմաբան ու երևութաբան Միրչա Էլիադեն՝ նշելով, որ «մարդու մոտ չէր կարող գիտակցություն ձևավորվել, եթե նա նշանակություն չտար իր զգայական աշխարհին»[2]:

Ինչպես ենթադրվում է, մահվան հետ կապված բոլոր ծեսերն ու հանդերձյալ աշխարհի վերաբերյալ գոյություն ունեցած առասպելական պատկերացումները կարող են լինել միմիայն խմբակային մտածողության արգասիք և պատկանել զգայական աշխարհին: Դա նշանակում է, որ տարբեր ժողովուրդների մոտ ձևավորված վախճանաբանական պատկերացումները կրոնամիստիկական մտածողության վրա հիմնված և կրոնական դատողությունների արդյունքում առաջացած սրբազան առասպելներ են: Առասպելը, իր հերթին, ինչպես բնորոշել է Խորհրդային հայտնի արևելագետ Լ. Ս Վասիլևը, «խմբակային սակրալ գիտակցության արտացոլանք է, որը

---

[1] Այլ կերպ ասած՝ «վախճանաբանություն»: Երկրագնդի վախճանի վերաբերյալ տարբեր կրոններում առկա կրոնամիստիկական պատկերացումների համընդհանուր համակարգ է:

[2] Элиаде М., История веры и религиозных идей, от каменного века до элевсиндских мистерий, М., 2008. с. 6

հակադրվում է անհատականին՝ աշխարհիկին և արմատապես տարբերվում է դրանից[3]:

Զրադաշտականության ժամանակաշրջանում գերեզմանի մոտ կատարվող արարողակարգը, ինչպես նաև հանգուցյալի հոգու ճանապարհորդության վերաբերյալ կրոնամիստակական զրեթե բոլոր պատկերացումները ժամանակի ընթացքում, մարդկային մտածողության զարգացմանը համընթաց, փոփոխվել են: Մասնավորապես, նկատելի է դարձել ծիսական արարողությունների պահպանման գիտակցության նվազում: Մարդկային մտածողությունն այն ժամանակ է կորցրել «հարգանքը» ծեսի ու ավանդույթի հանդեպ, երբ այն խմբակային մտածելակերպից անցում է կատարել դեպի անհատական:

Ըստ Միրչա Էլիադեի՝ «մահը գոյության և կեցության միանշանակ սրբազան ձև է»[4]: Այդ տրամաբանության համաձայն՝ մահից հետո մարդու հետ կատարվող ամեն ինչ տեղափոխվում է սրբազան դաշտ: Մահը և մահվան հետ կապված բոլոր հավատալիքներն ու առասպելներն իրենցից ներկայացնում են տարբեր սրբազան երևույթների հարուստ շտեմարան:

Թեև «զաթերը» համարվում են զրադաշտականների սուրբ զրքի «Ավեստայի» ամենահին հատվածները, դրանք չեն հաղորդում մեզ բավականաչափ տեղեկություններ մահից հետո հոգուն[5] սպասվող ճակատագրի վերաբերյալ, որը դուրս է գալիս մարմնից մահվանից[6] անմիջապես հետո:

Վախճանից հետո հոգու ճանապարհորդության վերաբերյալ առավել կարևոր տեղեկություններ ենք ստանում «Փոքր ավեստայից», որտեղ, ի շարս այլ պատկերումների, նկարագրվում է այն վիճակը, թե ինչ է զգում մեղավոր կամ արդար մարդու հոգին երեք օր ու գիշեր սսվառնելով իր երկրային տան շուրջը: Ի հավելումն «Փոքր Ավեստայի» պահլավական և ֆարսի զրականության մեջ ոչ միայն նորովի վերլուծվում ու վերապատմ-

---

[3] Васильев Л. С., Проблемы генезиса китайской мысли. М., 1989, с. 4

[4] Элиаде М., Оккультизм, колдовство и моды в культуре, София, 2002, с. 59

[5] Ավեստայի լեզվով «Ուրվան» նշանակում է «հոգի» (պիվ. Ruavn, նոր պրսկ. ravan): «Ուրվանը» զրադաշտական կրոնում ամենակարևոր հոգեբանական հասկացություններից է:

[6] Զրադաշտական կրոնում «մահը» ֆիզիկական կյանքի դադարեցումն է, որն իրենից ենթադրում է հոգու և մարմնի առանձնացում: Ըստ իրանական «Բունդահիշտի»՝ մարդկային անհատականության մեջ գոյություն ունեցող հինգ կարևոր տարրերը, այդ թվում՝ «թան» (tan-մարմին), «ջան» (jan-հոգի, հոգևոր ուժ), «ռավան» (հոգի-ravan), «էվինակ». (ձևevinak), «ֆրոխար» (ֆրավաշի-frohar) մահից հետո առանձնանում են: Մարմինը վերադառնում է երկիր, կյանքը ձուլվում է քամուն, ձևը՝ արևին, հոգին՝ ֆրավաշիին, իսկ հոգին վերացնել հնարավոր չէ:

վում է «Ավեստայի» ողջ նյութը, այլև հանդիպում են նորանոր մտքեր ու զաղափարներ՝ մահից հետո հոգու անորոշ կարգավիճակի վերաբերյալ:

Ըստ «Խաղխոխտ» նասկի՝ երբ մահանում է բարեպաշտ անձը, հոգին մնում է նրա գլխավերևում կանգնած[7], երգում է սրբազան հիմներ և գովերգում է երջանկությունը, որն Ահուրամազդան շնորհել է միայն երանելիներին: Հիշյալ գլխում կարդում ենք հետևյալ տողերը, որտեղ Զրադաշտը, դիմելով Ահուրամազդային, բացականչում է. «Ո՛վ Ահուրամազդա, սուրբ հոգի ու երկրային կյանքի արարիչ, դու, որ սուրբ ես բոլոր սրբերից, ասա՛ ինձ, երբ մահանում է բարեպաշտ մարդը, որտե՞ղ է գտնվում նրա հոգին մահվան առաջին գիշերը»: Ահուրամազդան պատասխանում է. «Հոգին կանգնած կլինի մարմնի գլխավերևում և կերգի երջանկությունը փառաբանող «Ուշտավայտի»* կոչվող զաթն արտասանելով. «Փրկություն կգտնի նա, ում Ահուրամազդան իր կամքով փրկություն կշնորհի և այս գիշեր նրա հոգին այնպես կցնծա և այնքան ուրախ կլինի, որքան ուրախություն ու ցնծություն նա տեսել է իր ողջ կյանքի ընթացքում»[8]:

Երեք անգամ տալով Ահուրամազդային միևնույն հարցը Զարդաշտն ստանում է նույն պատասխանը: Զգացողությունների նման նկարագրություն մեք հանդիպում ենք նաև «Վիշտասպ» յաշտում, զգացողություններ, որ վերապրում է բարեպաշտ հոգին մահից անմիջապես հետո: Այստեղ, իհարկե, կան որոշ հավելումներ, ըստ որոնց մահվան առաջին գիշերը մահացածի հոգին գտնվում է **բարի խոսքերի** ազդեցության ներքո, երկրորդ գիշերը այն գտնվում է **բարի գործերի**, իսկ մահվան երրորդ գիշերը երկու ճանապարհների խաչմերուկներում: Այս երկու ճանապարհներից մեկը նախատեսված է մեղավորների համար, որը տանում է դեպի հավիտենական չարչարանքներ, իսկ մյուսն իհարկե, բարեպաշտների համար նախատեսված ճանապահն է[10]:

Ավեստայի տեքստերում չի խոսվում այն մասին, թե վերը նշված զգացողություններից բացի ինչ է զգում բարեպաշտ մարդու հոգին մահից հետո երեք օրվա ընթացքում, սակայն տեսնելով, թե այդ թեման պահլավական գրականության մեջ ինչպիսի զարգացում է ստացել, տրամա-

---

[7] Փարսերի հուղարկավորության ծեսերի համաձայն մահացածի դին լավ լվանալուց ու սպիտակ սավանի մեջ փաթաթելուց հետո, դնում էին տան մուտքի մոտ քարե սալիկի վրա, որտեղ և կատարվում էր հուղարկավորության ծեսերի որոշ մասը: Հանգուցյալի գլուխը դնում էին այնպես, որ այն չնայի դեպի հյուսիս (տե՛ս Кереджи Парви Д. Д. Зороастрийская доктрина загробной жизни, с момента собственной смерти и до моста Чинват, М., 2004, с. 17)

[8] Ավեստայում այսպես է կոչվում երկրորդ զաթը

[9] Տե՛ս, Кереджи Парви Д. Д., նույն տեղում, էջ 17

[10] Տե՛ս, նույն տեղում, էջ 17

բանորեն հանգում ենք այն մտքին, որ «Չինվադ» կամուրջի մոտ հոգուն սպասել է Վիզարեշա դևը, որն, անկասկած, ցանկացել է հարձակվել նրա վրա և հափշտակել նրան: Վիզարեշա դևին կարող էին միանալ նաև այլ դիվային ուժեր, այնպիսի ուժեր, ինչպիսիք են «Աստովիդխատու» և «Վայնու» դևը, որոնք ցանկանում են կտրել «կյանքի թելը»: Նրանք փորձում են սպանել հոգուն, ինչպես ժամանակին ցանկացել են սպանել մարմինը: Հնարավոր է հենց սա է պատճառը, որ ինչպես վկայված է Ավեստայում, հոգիները կանչում են Սրաոշա կոչվող հրեշտակին, որը պետք է պաշտպաներ բարեպաշտ հոգուն Աեշմա և Վիդխատ չար ուժերի կողմից բարեպաշտ հոգիների վրա հարձակման ուղարկված դևերից[11]:

[11] Տե՛ս, Кереджи Парви Д. Д., նույն տեղում, էջ 19